



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Զերմուկ

21/նոյեմբերի/2018 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...8... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը, ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հայկ Դավթյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Սեդրակ Ասատրյանը, գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը

Նիստը վարում էր Զերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը:

Նիստը արձանագրում էր Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

**ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. Վարդան Հովհաննիսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Զերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի նիստի հետևյալ *օրակարգը*.

1.1. Զերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

